



## International Ecumenical Peace Convocation

Kingston | Jamaica | 2011

### Աղօթք Խաղաղութեան – Կիրակի, 22 Մայիս 2011

Աստուած խաղաղութեան՝ Արարիչ, Փրկիչ եւ Արբացուցիչ,  
Դարձեալ քեզի կը դիմենք գթութիւն եւ ներողամտութիւն հայցելու:  
Կը խնդրենք որ աշխարհիս խաղաղութիւն պարգեւես. որովհետեւ զայն ունենալու բազմաթիւ  
կարելիութիւններ ի դերեւ հանած ենք, բազմաթիւ նիւթեր վիժեցուցած եւ խուսափած չարը  
բարիով յաղթահարելու մեր հաւաքական նիւթեր մէջ:  
Ներէ մեզի, Տէր:

Խաղաղութիւնդ պարգեւէ, կ'աղօթենք:

Ահաւասիկ, երբ ողորմութեանդ կը դիմենք, նաեւ յանուն խաղաղութեան կը խօսինք եւ  
նորոգեալ հոգիով կը վերահաստատենք մեր խաղաղասէր եւ արդարագործ ըլլալը:  
Շնորհակալութիւն կը յայտնենք *Վայրագութեան Յաղթահարման Տասնամեակին* համար, որ  
ծառայեց խաղաղութեան գիտակցութեան վերարժեւորումին: Միաժամանակ, խոնարհաբար  
կը հաստատենք թէ որպէս խաղաղութեան կերտիչներ շատ աւելին կատարելու կոչուած ենք:

Խաղաղութիւնդ պարգեւէ, կ'աղօթենք:

Ս. Հոգիիդ հպումով մեր սրտերն ու միտքերը խաղաղութեան առաջնորդէ եւ մեզ  
խաղաղութեան դեսպաններու վերածէ այս պահէն սկսեալ:  
Մեզ գործակիցներդ դարձուր, որպէսզի խաղաղութիւնը թագաւորէ երկրի վրայ:  
Խաղաղութիւնդ պարգեւէ, կ'աղօթենք: Իմաստութիւն եւ կարողութիւն պարգեւէ, որպէսզի  
խաղաղութեան համընդհանուր հաստատման հաւատարմութեան մէջ շարունակենք մեր  
կեանքը:

Խաղաղութիւնդ պարգեւէ, կ'աղօթենք:

Խաղաղութեան Աստուած, քո խաղաղութեանդ ծառաները դարձուր մեզ այս *Միջագգային  
Միջ-եկեղեցական Խաղաղութեան Հաւաքին* եւ ամէնուր, որպէսզի կամքդ կատարենք եւ  
խաղաղութեամբ ապրինք:  
Այս բոլորը կը խնդրենք Խաղաղութեան Իշխանին՝ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի  
անունով. ամէն:

*Աղօթք Դարիպեան Կղզիներէն*